**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԾՁԲ-20-7/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 16 .03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից և «Սավա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Յաղուբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 17.12.2019թ. կնքված № ԳՀԾՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատուցել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ծառայության մատուցում (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կատարողի կողմից մատուցված Ծառայության գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **13868192 (տասներեք միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Սույն Ծառայության գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՍԱՎԱ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | Ք. Աբովյան, Հանրապետության 8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1066977010 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 03514047 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ |

«Ս Ա Վ Ա» «С А В А» «S A V A» 03514047

*Հավելված N 1*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ծառայությունների անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը | գումարը (ՀՀ դրամ) | Ծառայության մատուցումը 2020թ, ընդ որում՝ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր |
| 1 | փաթեթավորման ծառայություններ (Շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայություն)՝ այդ թվում՝ | դրամ | 1 | | 13868192 | | | | | | | |
| | փաթեթավորման ծառայություններ (Շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայություն) | կգ | 93704 | 148 | 13868192 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 14000 | 9704 |

*Հավելված N 2*

**Վճարման ժամանակացույց**

ՀՀ դրամ

| Հ/հ | Ծառայության անվանում | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV կոդեր | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | փաթեթավորման ծառայություններ (Շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայություն) | 79921100/503 | 2072000 | 4144000 | 6216000 | 8288000 | 10360000 | 12432000 | 13868192 | 13868192 | 13868192 | 13868192 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**«Ս Ա ԿԱՏԱՐՈՂ»**

«С А В А»
«ՍԱՎԱ» ԱՊԸ Ա»
Տնօրեն 03514047

Հ. ԾԱՂՈՒՐՅԱՆ

մ/Վ